«ՆԱԽԻՋԵՎԱՆ» ՀԱՅՐԵՆԱԿՑԱԿԱՆ ՄԻՈՒԹՅԱՆ ԳԻՏԱԺՈՂՈՎԸ

«Նախիջևան» հայրենակցական միությունը, Պատմաբանների հայկական ընկերությունը և Երևանի պետհամալսարանի Հայ ժողովրդի պատմության ամբիոնը մարտի 16-ին Երևանի պետհամալսարանի պատմության ֆակուլտետի դահլիճում անցկացրեցին գիտաժողով՝ «Նախիջևանի» հիմնահարցը 1921թ. մարտի 16-ի ռուս-թուրքական պայմանագրում» թեմայով:

Գիտաժողովը բացեց «Նախիջևան» հայրենակցական միության նախագահ Ռաֆայել Համբարձումյանը: Նա, շնորհակալություն հայտնելով գիտաժողովի մասնակիցներին, տեղեկացրեց, որ այս գիտաժողովը նշված թեմայի վերաբերյալ առաջինն է՝ 1921 թվականից ի վեր: Խորհրդային ժամանակներում հնարավոր չի եղել թեմայի արծարծումը, իսկ անկախության հռչակումից հետո նոր իշխանությունները ուշադրություն չեն դարձրել հիմնահարցին: Այդ թեման մինչև այսօր գիտական անկողմնակալ, ամբողջական ու սպառիչ գնահատական չի ստացել:

Այնուհետև նա խոսքը տվեց ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս Լենդրուշ Խուրշուդյանին, որն էլ վարեց գիտաժողովը:

«1921թ. մարտի 16-ի ռուս-թուրքական պայմանագիրը և Նախիջևանի հիմնախնդիրը» թեմայով զեկուցում կարդաց ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս Հրաչիկ Սիմոնյանը: Հաջորդ զեկուցումը կարդաց պատմ. գիտ. դոկտոր, պրոֆ. Էդուարդ Զոհրաբյանը («Նախիջևանը 1918–1920 թթ. հայ-պարսկական հարաբերություններում»):

«Նախիջևանի հայաթափումը խորհրդային իշխանության տարիներին» թեմայով զեկուցեց նաև ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս Վլադիմիր Խոջաբեկյանը:

Գիտական հաղորդումներով հանդես եկան պատմ. գիտ. դոկտոր, պրոֆ. Բաբկեն Հարությունյանը, պատմ. գիտ. թեկնածուներ Հակոբ Հակոբյանը, Արսեն Սարգսյանը և Հովհաննես Կարագյոզյանը:

Գիտաժողովը եզրափակեց Ռ. Համբարձումյանը:

Մ.ՎՀԱԿՈԲՅԱՆ